ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> 09 2011թ. N: 2896 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման>> կարգի 5-րդ, 7-րդ կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի միջոցառումների պլանի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2011 թվականի հոկտեմբերի 28-ին Շիրակի մարզային փրկարարական վարչության Ախուրյանի հրշեջ փրկարարական ջոկատի վարժահրապարակում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը փլատակներում հրդեհի օջախի առկայության դեպքում>> թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ս. Պետրոսյանին, իսկ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Մ. Սարիբեկյանին:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը և Ախուրյանի հրշեջ փրկարարական ջոկատը,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքացիական պաշտպանության հետևյալ ծառայությունները.

ա. բժշկական ծառայություն - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ. Հովհաննիսյան,

բ. հասարակական կարգի պահպանման ծառայություն - Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ Ա. Տեր-Թովմասյան,

գ) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն - <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Ղարս>> մասնաճյուղի տնօրեն Գ. Ֆարզադյան,

դ) կոմունալ – տեխնիկական ծառայություն - <<Շիրակջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ Վ. Մարտիրոսյան,

3) <<Հայոուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազամատակարարման – գազաբաշխման մասնաճյուղը՝ տնօրեն Ա. Մկոյան,

4) Ախուրյանի համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը և քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը:

4. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) Մինչև 2011 թվականի սեպտեմբերի 28-ը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

2) Մինչև 2011 թվականի հոկտեմբերի 20-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Իսկականի հետ ճիշտ է՝

Ա.ԳԻՀԻՐՅԱՆ